



# Newsletter July 2024

## In This Issue

- Graduation Holy Mass
- His Excellency Bishop Mikael Mouradian at ASA
- Last Bell
- Procession of the Virgin Mary at ASA
- Closing the Month of May at the Church
- Dallas Raines at ASA
- Student Council 2024-2025
- Self-Defense Competition
- Crusader Day
- Sports Banquet
- Mother's Day
- Award Day 23-24
- Father's Day
- Graduation Ceremonies 23-24
- Miscellaneous & Thank you

## Calendar

- Aug.26 Teachers Welcome
- Aug.27-29 Faculty & Staff PD
- Aug.29 New Student Orientation
- Sept.3 First Day of Instruction (Noon Dismissal)
- Sept.13 Back to School Night (K-8th Grades)

 [Armenian Sisters' Academy](#)  
[Armenian Sisters' Academy Preschool](#)

 [asa\\_montrose](#)  
[asamontroseprek](#)  
[asa\\_alumni\\_association](#)

 [asamontrosela](#)

## Graduation Holy Mass

Կիրակի, 1 Յունիսին, Կլենտելլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, գերապատիւ Հայր Լեւոն Ստեփանեան մատուցեց 8-րդ դասարանին նուիրուած Ս. Եւ Անմահ Պատարագ, որմէ ետք տեղի ունեցաւ հիրասիրութիւն եկեղեցւոյ սրահին մէջ: Ներկայ էին դպրոցին տնօրէնութիւնը, ուսուցչակազմը, ծնողներ եւ բարեկամներ:



On Sunday, June 2, Reverend Father Levon Sdepanian celebrated Holy Liturgy for the Class of 2024 at St. Gregory the Illuminator. A reception followed the mass where school administration, faculty, staff, parents, and friends honored the graduating class.

**Armenian Sisters' Academy**  
2361 Florencita Drive, Montrose, CA 91020  
Phone (818)249-8783 • Fax (818) 249-7288  
[www.asamontrose.com](http://www.asamontrose.com)



## His Excellency Bishop Mikael Mouradian at ASA

His Excellency Bishop Mikael Mouradian visited our school and talked with the Class of 2024 about their future path in high school. He spoke to them about facing challenges with courage, practicing what they learned at ASA, holding tightly to their Armenian identity, and remaining strong in the faith.

Արհիպապատի Տէր Միքայէլ եպիսկոպոս Մուրատեան այցելեց մեր դպրոցը եւ 2024-ի աւարտական դասարանին հետ զրուցեց երկրորդական վարժարաններուն մէջ անոնց հետագայ անցնելիք ուղիին մասին: Ան խօսեցաւ մարտահրաւերներու մասին, որոնց անոնք կրնան հանդիպիլ, խրախուսեց աշակերտներուն կիրառել այն՝ ինչ սորված են ՀԲՎ-ի մէջ եւ անոնց կոչ ուղղեց ամուր մնալու իրենց հաւատքին եւ ազգային ինքնութեան մէջ:

## Last Bell

Իրենց դպրոցական կեանքի ամենէն անմեղ եւ հաճելի տարիները անցընելէ ետք Հայ Քոյրերու վարժարանին մէջ, 8-րդ դասարանի աշակերտները, Հինգշաբթի, 6 Յունիսին, դպրոցին մէջ լսեցին իրենց վերջին զանգը: Այդ վերջին զանգին մէջ խտացուած էր իրենց մանկութեան բոլոր յիշատակներու ուրախ եւ տխուր վայրկեանները:

Այցելելէ ետք բոլոր դասարանները եւ գրասենեակները, 8-րդ դասարանցիները յուզումնախառն զգացումներով հրաժեշտ տուին իրենց սիրած դպրոցին, աշակերտներուն, ուսուցիչներուն եւ տեսչական կազմին, խոստանալով որ միշտ երախտապարտ պիտի ըլլան եւ յաճախ այցելեն Հայ Քոյրերու վարժարան:



After completing the most innocent and pleasant years of their school life at Armenian Sisters' Academy, the 8th-grade students heard the dismissal bell for the last time on June 6.

Nostalgia and melancholy gripped the students in a bitter-sweet tour of campus as they progressed from one class to another in the hallways.

They parted ways wishing farewell to their classmates, students from other classes, teachers, and administration promising to be grateful and to visit Armenian Sisters' Academy often.





## Closing the Month of May with a Procession of the Virgin Mary at ASA

Մայիս ամսուան ընթացքին վարժարանիս աշակերտները ամէն առաւօտ իրենց օրը սկսան Վարդարանի աղօթքով: Ամսուան վերջին օրը, հանդիսաւոր կերպով թափօր կատարուեցաւ դպրոցի շրջափակին մէջ, որուն ընթացքին աշակերտները կատարեցին Աստուածամօր նուիրուած աղօթքներ եւ շարականներ:

During May, our students started the day by praying a decade of the Rosary every morning. On the last day of the month, a procession was held on the school grounds during which the students performed prayers and hymns dedicated to Mary, the Mother of God.

## Closing the Month of May at the Church

Հայ Քոյրերու Վարժարանին 3-րդ դասարանի աշակերտներէն ներկայացուցիչներ, որոնք Ապրիլ 17-ին ստացած էին իրենց Առաջին Սուրբ Հաղորդութիւնը, մասնակցեցան Մայիսեան Ս. Աստուածածնայ թափօրին Կլենտելի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

On Friday, May 31st, some of the 3rd-grade students of Armenian Sisters' Academy who received their First Holy Communion on April 17, participated in the Virgin Mary Procession at St. Gregory Armenian Catholic Cathedral – Glendale.



## Dallas Raines at ASA

Dallas Raines, chief meteorologist for ABC Channel 7, visited the 3rd grade class on June 4, where he inspired students with his charming personality and true passion for weather. They learned about the Mega Doppler, forecasting, glaciers and so much more. Dallas took the time to connect 3rd grade California core science standards into a fun lesson about the weather. The finale was when he showered the class with a surprise candy rain shower.



# Student Council 2024-2025

**Congratulations !**

Name	Grade	Position
Ashley Keshishian	8	President
Vanya Samuelian	7	Vice President
Vania Araradian	7	Secretary
Arpa Bostanian	7	Treasurer
Ariana Kotikian	7	Sport Commissioner
Veronica Avoyan	6	Spirit Commissioner
Meghri Handian	8	Spirit Representative
Shant Najarian	8	Religious Commissioner
Inessa Barsegyan	7	Photographer/Historian
Noushig Shenian	8	Armenian Culture Commissioner
Gabriella Aleksanyan	6	6th Grade Representative



## STUDENT COUNCIL 24-25





# Self-Defense Competition



«Առողջ միտք՝ առողջ մարմնի մեջ»:  
 Շնորհալուրիներ ՇԲԿ-ի աշակերտներուն, որոնք մասնակցեցան ինքնապաշտպանութեան ամառային ընթացակարգի եւ ստացան իրենց վկայականները:  
 Շնորհակալութիւն մարզիչ Սերկէյ Խաչատրեանին՝ մեր աշակերտներուն ինքնապաշտպանութեան հմտութիւնները սորվեցնելու համար:

Congratulations to our students who participated in the Self-Defense Competition and earned their diplomas! Thank you to Sensei Sergey Khachatryan, President of JKS Armenia, for his hard work and dedication in teaching ASA students these invaluable self-defense techniques.

# Crusader Day

Coach Alec and the Sports Committee hosted Crusader Day on May 30th, 2024. The blue and red teams competed in a series of fun tournaments such as tug of war, a 100M race, a spoon race, egg Ttss, Rrng Ttss, cornhole, and a disc toss. The day ended with several Faculty vs. Students games! Congrats to all the participants! Go, Crusaders!



# Sports Banquet

Under the leadership of our Athletic Director, Alec Kurkjian, the Sports Committee hosted the Annual Sports Banquet on Friday, May 17th. All the athletic achievements of the ASA student athletes were recognized such as KAHAM Track & Field, Basketball, and Volleyball as well as the 3rd Annual ASA Kickball Tournament. The night also included a special banner reveal for the first-ever 8th Grade Blue Division Championship team for our Girls Volleyball Team which will hang in our school's athletic facilities. Congratulations, Crusaders!





## Mother's Day

Խանդավառությամբ եւ փոքրիկ յայտագրով երգերով եւ արտասանութիւններով փոքրիկները փոխանցեցին իրենց սէրը եւ շնորհատրեցին Մայրերու Տօնը:

Our Preschool and Kindergarten students celebrated, expressed their love, and shared their gratitude to their moms in their unique way. Happy Mother's Day!



## Award Day 23-24

We congratulate all of our ASA students for their hard work and honor those who received special recognition with academic honors and academic excellence. Congratulations on your achievements! Father's Day.



## Father's Day

On Father's Day, our preschool students experienced a heartwarming hour of quality time with their dads in the comfort of their respective classrooms.

Together, fathers and children engaged in a variety of interactive activities that fostered connection and shared experiences.

In this nurturing environment, the children felt a profound sense of pride and accomplishment as they showcased their skills and knowledge to their fathers.



Հայրերու օրուան առթիւ մեր մանկամտօրի աշակերտները իրենց հայրերուն հետ հաճելի ժամանակ անցուցին իրենց դասարանին մէջ: Միասին հայրերն ու երեխաները ներգրաւուեցան շարք մը միացեալ աշխատանքներու մէջ, որոնք խթանեցին իրենց միջեւ կապը եւ յիշատակներ կերտեցին: Այս սնուցող միջավայրին մէջ երեխաները հպարտութեան եւ ձեռքբերումներու խոր զգացում ունեցան, երբ իրենք ցուցադրեցին իրենց հմտութիւններն ու գիտելիքները իրենց հայրերուն:



# Class 2024 Graduation Ceremony

Կիրակի, 9 Յունիս 2024-ին, տեղի ունեցավ Հայ Քոլյերու Վարժարանի 8-րդ կարգի ամավերջի եւ վկայականներու բաշխան հանդիսութիւնը որ սկիզբ առաւ շրջանաւարտ աշակերտներուն՝ Տէրունական աղօթքի, Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի քայլերգներու կատարումով:

Բացման խօսքով, վարժարանիս փոխտնօրէնուհի տիկ. Ռիթա Պոյաճեան բարի գալուստ մաղթեց եւ նշեց, որ վկայականաց հանդէսը ուրախութեան եւ հպարտութեան օր է, ամբողջ տարուան մը բերքահաւաքի օրն է, երբ կը քաղենք կրթական տարեշրջանի ընթացքին տնօրէնութիւն - ուսուցչակազմ - ծնողք - աշակերտներ հաւաքական աշխատանքին հունձքը:

Վարժարանիս տնօրէն Դոկտ. Խուլիօ Թէլէզ խօսք առնելով, ըսաւ «հաւատացէք ձեր յաղթանակներուն եւ իրականացուցէք ձեր երազանքները»:

Այնուհետեւ, հայերէնով սրտի խօսք փոխանցեց փոխտնօրէնուհի տիկին Ռիթա Պոյաճեան՝ ըսելով. «Կեանքը լեցուն է մարտահրաւերներով, խոչընդոտներով, վերիվայրումներով, կեանքը ռոլըր քոսթըրի նման է: Կրնաք օր մը շատ բարձրանալ, օր մը նահանջել, կրնաք օր յաջողիլ, օր մը ձախողիլ, բայց եթէ դուք Հայ Քոլյերու Վարժարանէն ձեր ստացած մարդկային, կրօնական, ազգային բոլոր արժէքները որպէս զրահ գործածէք, անպայման կը յաղթահարէք բոլոր դժուարութիւնները»:



8-րդ դասարանի դաստիարակ Պրն. Ռայէն Ճոնզ խօսք առնելով ըսաւ, որ այս դպրոցին մէջ շատ բան սորվեցայ իմ աշակերտներէս: 8-րդ դասարանի ուղերձները անգլերէնով փոխանցեց Թալին Սկրտիչեանը, իսկ հայերէնով՝ Շանթ Ետկարեանը:

Յայտագրին գեղարուեստական բաժնով, շրջանաւարտ աշակերտները ներկայացուցին Եղիշէ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը, իսկ անգլերէնով՝ «Forever Young»: Թալին Սկրտիչեանն ու Շանթ Ետկարեանը դաշնամուրի նուագով կատարեցին հատուած մը Անուշ Օփերայէն:

Օրուան հիւր բանախօսն էր վարժարանիս 2014-ի շրջանաւարտ Ալէն Շանթ Եուսէֆը, որ մտաբերեց Հայ Քոլյերու Վարժարան եկած իր առաջին օրը, երբ Քոլյերն ու ուսուցիչները զինք գուրգուրանքով եւ ջերմութեամբ դիմաւորեցին: «Այս վարժարանին մէջ ես սորվեցայ գիտելիքներ եւ կրթութիւն, որոնք հիմը դրին իմ ապագայի մասնագիտութեանս եւ որոնց համար շատ երախտապարտ եմ», նշեց բժշկութեան ուսանող Ալէն Շանթ Եուսէֆը:

Վարժարանիս ընդհանուր պատասխանատու Քոյր Լուիզա Գասարճեան, շրջանաւարտները համարելով Հայ Քոյերու վարժարանին պատիւը եւ հրճուանքը, իր սրտի խօսքը արտայայտելով, ըսաւ. «12 պատանիներ, իրաքանչիւրը ինքնուրոյն յատկութիւններով, կարողութիւններով, անհատականութեամբ կը սաւառնին արծիւի նման բարձր, երթալու համար նոր միջավայր մը, եւ որոնց պիտի բացուի անծայրածիր հորիզոններ եւ նոր փորձառութիւններ»: Առաքինագարդ քոյրը ըսաւ, որ աշակերտները մեր վարժարանին մէջ թրծուեցան Աստուծոյ սիրով եւ խոր հաւատքով, կերտուեցան ճշմարիտ հայու գաղափարով եւ մշակեցին իրենց մէջ գիտակցութիւնը լաւին եւ բարիին: Իր խօսքի ամառտին, Քոյր Լուիզա կոչ ուղղեց շրջանաւարտներուն ըլլալու տիպար հայ եւ բանաստեղծ Վահան Թէքէեանի խօսքերով յորդորեց անոնց բարձրանալ եւ իրենց հետ բարձրացնել ուրիշներ մինչեւ գագաթն արժիւտ:

Տեղի ունեցաւ գերագանց աշակերտներու պարգեւատրում, ինչպէս նաեւ տիկին Քարին Փիլաւեան փոխանցեց Փիլաւեան հիմնադրամի նուէրը՝ մանկամտութիւն մինչեւ 8-րդ դասարան ՀՔՎ յաճախած աշակերտին, իսկ պարոն Անթուան Պեզճեան Տարուայ օրինակելի աշակերտին նուիրեց Պէյրութի նաւահանգիստի պայթումին նահատակ Ճեսիքա Պեզճեանի անուան յիշատակի նուէրը: Այնուհետեւ կատարուեցաւ վկայականներու բաշխումը 12 շրջանաւարտներուն:

Աւարտին, գերապատիւ Հայր Արմենակ Պետրոսեան խօսքը շրջանաւարտներուն ուղղելով՝ ըսաւ, որ ամէնէն մեծ եւ մնայուն հարստութիւնը գիտելիքն է, որեմն եղէք գիտելիքներով հզօր: «Ինչ ճանապարհ ալ ընտրէք, եղէք միշտ ուսումնասէր, հայրենասէր, աստուածասէր եւ աստուածավախ: Եղէք Հայ Քոյրերու Վարժարանին հաւատարիմ առաքեալները եւ անոր դեսպաններն ու ներկայացուցիչները ձեր նոր միջավայրին մէջ: Ունեցէք մեծ երազանքներ, հետաքրքրասէր եղէք եւ մի դադրիք երազելէ, ինքնավստահ եղէք միշտ եւ պատրաստ՝ յաջորդ քայլին», եզրափակեց գերապատիւ վարդապետը:

## Preschool End of year Celebration

**Ուրբաթ, 14 Յունիս 2024**-ին, մանկամտութիւն սիրասուն երեխաները հանդէս եկան փունջ մը երգերով եւ պարերով:

Մանկամտութիւն տնօրէնուհին Տիկ. Գարին Փիլաւեան սրտի խօսքին մէջ շեշտեց, որ մանուկները տարուան ընթացքին աճեցան մարմնով, հոգիով եւ մտքով, անոնց կենցաղն ու ապրելակերպը հարստացնելով ընկերական եւ մաքուր փոխյարաբերութիւններով:



Ան նաեւ դրուատեց շնորհաշատ ուսուցչուհիները, որոնք ջանք ու եռանդ չխնայեցին ի յայտ բերելու իրենց խնամքին յանձնուած իրաքանչիւր երեխային թաքնուած ձիրքերն ու կարողութիւնները:



Օրուան յայտագիրը փակեց վարժարանիս ընդհանուր պատասխանատու Քոյր Լուիզա Գասարճեան՝ շնորհակալութիւն յայտնելով ուսուցչուհիներուն եւ ծնողներուն: Ան նաեւ դիտել տուաւ, որ մանուկները իրենց բոլոր կարողութիւնները ներկայացուցին, հպարտութեամբ եւ ուրախութեամբ կատարելով իրենց դերաբաժինը:



# Kindergarten Graduation Ceremonies 2023-2024

**Չորեքշաբթի, 19 Յունիսին**, կոկիկ հանդիսութեամբ մը մանկապարտեզի շրջանաւարտ աշակերտ-աշակերտուհիները ներկայացուցին ասմունք, պարեր ու երգեր:

Բարի գալուստի խօսքով, փոխտնօրէնուհի տիկին Ռիթա Պոյաճեան ըսաւ, «դուք ձեր հիմերը դնելով ՀՔՎ-ի մանկապարտեզին մէջ, կը խոստանաք ձեր գիտելիքները օւելցնել նախակրթարանին մէջ՝ հետագային դառնալու համար պարկեշտ անհատներ, իսկական հայ քրիստոնէաներ եւ Միացեալ Նահանգներու հաւատարիմ քաղաքացիներ»:

Հայ աշակերտին ուխտը արտասանելով, աշակերտները խոստում տուին սիրել հայրենիքն ու եկեղեցին եւ հպարտ ըլլալ հայ ըլլալու համար:



Տնօրէնութեան խօսքը փոխանցելով՝ դոկտ. Խուլիօ Թէյէզ շնորհակալութիւն յայտնեց աշակերտներուն, մասնաւորապէս անոնց անմեղ ժպիտներուն համար եւ անմեղ հարցումներուն համար, որ անոնք կը հարցնէին ամէն անգամ երբ ինք դասարան կ'այցելէր: Այնուհետեւ իր սրտի խօսքը փոխանցեց վարժարանիս ընդհանուր պատասխանատու քոյր Լուիզա Գասարճեան: Ան շնորհակալութիւն յայտնեց հանդէսը պատրաստողներուն, մասնաւորապէս՝ մանկապարտեզի դաստիարակ տիկին Թամար Հանտեանին:

Աւարտին, գերապատիւ Հայր Արմենակ Պետրոսեան հանդիսութիւնը փակեց «Պահպանիչ» աղօթքով:



## Miscellaneous & Thank you



**On June 21, 2024, ASA Dads Club held the Annual Cigar Night event at Armenian Sisters' Academy.  
The event raised \$36,000 from generous patrons and will cover part of the renovation project at the ASA Preschool.  
Thank you to everyone who contributed to the success of this event!**